



ՈւՂԵՑՈՒՅՑ

Գանձապետական Պահառուի միջոցով
պետական պարտատոմսերի ձեռքբերման



Գանձապետական Պահառու՝

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կառուցվածքային ստորաբաժանում, որն իրականացնում է պետական գանձապետական պարտատոմսերի անմիջական (մանրածախ) վաճառքը ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձանց:

Գործում է 1999 թվականից

2007 թվականին Համաշխարհային Բանկի կողմից Գանձապետական պահառուն ճանաչվել է որպես պարտատոմսերի մանրածախ վաճառքի լավագույն օրինակներից մեկը:



Առաքելությունը

- աջակցել այն ֆիզիկական անձանց, որոնք ցանկանում են հուսալի և ապահով ներդնել իրենց խնայողություններն ու ստանալ կայուն եկամուտ,
- վերականգնել բնակչության վստահությունը պետության՝ որպես փոխառուի, հանդեպ:



Հիմնական առավելությունները

- ❑ Պարտատոմսերի ձեռք բերում անմիջապես թողարկողից (ՀՀ ֆինանսների նախարարություն),
- ❑ Պարտատոմսերի վաճառքն իրականացվում է առանց միջնորդավճարի,
- ❑ Ֆիզիկական անձանց պարտատոմսերից ստացված եկամուտը չի հարկվում պետության կողմից:



Գանձապետական պահառուի միջոցով հնարավոր է ձեռք բերել՝

- ❖ խնայողական արժեկտրոնային պարտատոմսեր, որոնց արժեկտրոնի եկամտաբերությունը սահմանվում է ՀՀ ֆինանսների նախարարի հրամանով,
- ❖ պետական կարճաժամկետ, միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսեր՝ տեղաբաշխման աճուրդի միջին կշռված եկամտաբերությամբ:



Պարտատոմսերի ձեռքբերման եղանակները

❖ Երևան քաղաքում առևտրային բանկերում տեղակայված 4 սպասարկման կետերի միջոցով՝

1. Ամիրյան 23/1՝ Հայէկոնոմբանկ,
2. Թոթովենցի փողոց, նրբանցք 4՝ Հայբիզնեսբանկի «Նոր-Նորք» մասնաճյուղ,
3. Տիգրան Մեծի 24՝ Արդշինբանկի «Էրեբունի» մասնաճյուղ,
4. Կոմիտաս 49՝ Կոնվերսբանկի «Կենտրոնական» մասնաճյուղ:

❖ առցանց եղանակով՝ gp.minfin.am կայքի միջոցով, որը գործարկվել է 2017 թվականի ապրիլի 25-ից:



Գանձապետական պահառուի առցանց համակարգը

https://gp.minfin.am:9443/minfin/home.cmd



ՀՀ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԱՆԶԱՊԵՏԱԿԱՆ ՊԱՅՏԱՐՈՒ

Պարտատոմսեր

Նորություններ

Օրենքներ և Կարգավորումներ

Հաճախ տրվող հարցեր

Գրանցում ID քարտով

Մուտք 17:24:29 GMT+4

Վաճառքի պարտատոմսեր

Հետգնման պարտատոմսեր

- Տարբերակիչ ծածկագիր
- Արժույթ
- Արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն
- Թողարկման ամսաթիվ
- Մարման ամսաթիվ
- Հետգնման օրեր
- Վերջնահաշվարկի ամսաթիվ
- Տեղաբաշխման եկամտաբերություն
- Տեղաբաշխման անկա ծավալ
- Տեղաբաշխման հայտարարված ծավալ
- Տեղաբաշխման ավարտ

Տարբերակիչ ծածկագիր	Արժույթ	Արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն	Թողարկման ամսաթիվ	Մարման ամսաթիվ	Հետգնման օրեր	Վերջնահաշվարկի ամսաթիվ	Տեղաբաշխման եկամտաբերություն	Տեղաբաշխման անկա ծավալ	Տեղաբաշխման հայտարարված ծավալ	Տեղաբաշխման ավարտ	
AMGS08304216	AMD	9 %	30-04-2019	30-04-2021	01-02-2021 ▼	14-05-2019 15:00	9 %	293,200,000	300,000,000	04-06-2019 15:00	հաշվել
AMGS04304202	AMD	8.5 %	30-04-2019	30-04-2020	30-01-2020	14-05-2019 15:00	8.5 %	289,200,000	300,000,000	04-06-2019 15:00	հաշվել
AMGS12304228	AMD	9.5 %	30-04-2019	30-04-2022	01-11-2021 ▼	14-05-2019 15:00	9.5 %	251,156,000	300,000,000	04-06-2019 15:00	հաշվել
AMGS0230A192	AMD	8 %	30-04-2019	30-10-2019	30-07-2019	14-05-2019 15:00	8 %	228,112,000	300,000,000	04-06-2019 15:00	հաշվել




Առցանց եղանակով պարտատոմսեր ձեռք բերելու համար ներդրողը պետք է գրանցվի համակարգում, ինչը կարող է իրականացվել երկու տարբերակով.

- ✓ այցելելով Գանձապետական պահառուի որևէ սպասարկման կետ, որտեղ սպասարկման կետի աշխատակիցը ներդրողին գրանցում է համակարգում,
- ✓ ակտիվացված նույնականացման քարտ և քարտը կարդացող սարք ունենալու դեպքում՝ ներդրողը կարող է ինքնուրույն գրանցվել gp.minfin.am կայքում:

Քարտի ակտիվացման համար անհրաժեշտ է www.ekeng.am կայքից ներբեռնել և համակարգչում տեղադրել **Crypto Card Suite Manager** ծրագիրը և օգտվել կայքում առկա ձեռնարկից (https://www.ekeng.am/file_manager/Userguide.pdf):



Ինքնուրույն գրանցվելու դեպքում՝ անհրաժեշտ է քարտը կարդացող սարքը և նույնականացման քարտը միացնել համակարգչին և համակարգում սեղմել <<Գրանցում ID քարտով>> կոճակը:





Բացված պատուհանում լրացնել պահանջվող անձնական տվյալները, ծանոթանալ պահառության պայմանագրին և սեղմել <<Գրանցվել>> կոճակը:

Փրահցվել համակարգում

անուն:	<input type="text"/>
ազգանուն:	<input type="text"/>
հայրանուն:	<input type="text"/>
ծննդյան ամսաթիվ:	<input type="text"/> ✕ 🗄
ել փոստի հասցե*:	<input type="text"/>
գրանցման հասցե:	<input type="text"/>
սցիտալական քարտի համար:	<input type="text"/>
ID քարտի համար*:	<input type="text"/>
ID քարտի վավեր. ժամկետ*:	<input type="text"/> ✕ 🗄
ռեզիդենտություն*:	Armenia ▼
բանկ*:	<input type="text"/>
բանկային հաշվեհամարը*:	<input type="text"/>
հաշվեհամարի արժույթը*:	AMD ▼
կրեդիտային համար:	<input type="text"/>
անվտանգության կոդ*:	<input type="text"/>

Համաձայն եմ պայմաններին: [ներբերել պայմանագրի ձևը](#)



Որևէ տարբերակով գրանցվելուց հետո՝ ներդրողի կողմից նշված էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է համապատասխան օգտագործողի անուն և գաղտնաբառ, որից հետո ներդրողը պետք է մուտք գործի համակարգ ու փոփոխի սկզբնական գաղտնաբառը:

Համակարգ մուտք գործելուց հետո ներդրողը կարող է առցանց եղանակով ձեռք բերել գանձապետական պարտատոմսեր:



Առցանց եղանակով պարտատոմսերի ձեռքբերում

Համակարգ մուտք գործելուց հետո էկրանի վրա անմիջապես արտացոլվում է տվյալ պահի դրությամբ վաճառքի ենթակա պարտատոմսերի ցանկը: Գնման գինը հաշվարկելու համար անհրաժեշտ է ընտրել վաճառքի ենթակա պարտատոմսերից որևէ մեկը և սեղմել <<Հաշվել>> կոճակը:

Գարտատոմսեր Դրույթուններ Օրենքներ և Կարգավորումներ Հաճախ տրվող հարցեր Գրանցում ID քարտով | Մուտք 17:09:04 GMT+4

Վաճառքի պարտատոմսեր Հետզնման պարտատոմսեր

- Արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն
- Թողարկման ամսաթիվ
- Մարման ամսաթիվ
- Հետզնման օրեր
- Վերջնահաշվարկի ամսաթիվ
- Տեղաբաշխման եկամտաբերություն
- Տեղաբաշխման ամսա ծավալ
- Տեղաբաշխման ավարտ

Տարբերակիչ ծածկագիր	Արժույթ	Արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն	Թողարկման ամսաթիվ	Մարման ամսաթիվ	Հետզնման օրեր	Վերջնահաշվարկի ամսաթիվ	Տեղաբաշխման եկամտաբերություն	Տեղաբաշխման ամսա ծավալ	Տեղաբաշխման հայտարարված ծավալ	Տեղաբաշխման ավարտ	
AMGS02152207	AMD	7.5 %	15-08-2019	15-02-2020	15-11-2019	06-09-2019 15:00	7.5 %	290,500,000	300,000,000	18-09-2019 15:00	հաշվել
AMGS08158216	AMD	9 %	15-08-2019	15-08-2021	15-02-2021	06-09-2019 15:00	9 %	200,055,000	300,000,000	18-09-2019 15:00	հաշվել
AMGS04158202	AMD	8 %	15-08-2019	15-08-2020	15-05-2020	06-09-2019 15:00	8 %	283,300,000	300,000,000	18-09-2019 15:00	հաշվել
AMGS12158228	AMD	9.5 %	15-08-2019	15-08-2022	15-02-2022	06-09-2019 15:00	9.5 %	162,378,000	300,000,000	18-09-2019 15:00	հաշվել



Բացված պատուհանի <<Գնման արժեք>> դաշտում ներմուծվում է ներդրման ենթադրյալ գումարը: <<Հաշվել>> կոճակը սեղմելուց հետո համակարգը հաշվարկում է պարտատոմսի գնման գինը տվյալ պահի դրությամբ և վճարումների ժամանակացույցը (արժեկտրոնի վճարում և մայր գումարի մարում):

Խնայողական Դարտատոմսի Հաշվարկ

Տարբերակիչ ծածկագիր	AMGS12158228
Տեղաբաշխման առկա ծավալ	162,378,000 AMD
Թողարկման ամսաթիվ	15-08-2019
Վերջնահաշվարկի ամսաթիվ	06-09-2019 15:00
Մարման ամսաթիվ	15-08-2022
Արժեկտրոնի տարեկան եկամտաբերություն	9.5000 %

գնման արժեք AMD

Վճարում	Ամսաթիվ	Գումար
Արժեկտրոնի վճարում	15-11-2019	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-02-2020	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-05-2020	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-08-2020	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-11-2020	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-02-2021	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-05-2021	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-08-2021	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-11-2021	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-02-2022	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-05-2022	23,750 AMD
Արժեկտրոնի վճարում	15-08-2022	23,750 AMD
Մայր գումարի վճարում	15-08-2022	1,000,000 AMD

1,005,679.0 AMD
միջևորդական՝ 400 AMD
ցնդամենը՝ 1006079 AMD

10 25 50 100 150 200



Ընտրած պարտատոմսը ձեռքբերելու համար անհրաժեշտ է սեղմել <<Գնել>> կոճակը, որից հետո համակարգը բացում է Պետական վճարումների **e-payments** էլեկտրոնային համակարգի պատուհանը:

գնման արժեք AMD

Գանձապետական պահառուն ներդրողների սպասարկումն իրականացնում է առանց միջնորդավճարի, սակայն, առցանց եղանակով պարտատոմսեր ձեռք բերելու դեպքում **վճարային համակարգի** կողմից գանձվում է միջնորդավճար՝ ներդրողի բանկային հաշվից գումարները թողարկողի հաշվին փոխանցելու համար (**գործարքի գումարի 0,15%-ի չափով, բայց ոչ ավել, քան 400 դրամ**):

Ներդրողը պետք է ունենա վճարային քարտ՝ համապատասխան դրամական միջոցների հասանելի մնացորդով:



Բացված e-payments համակարգի պատուհանում լրացվում են ներդրողի վճարային քարտի տվյալները: Վճարումը հաստատելուց հետո ներդրողի էլեկտրոնային փոստի հասցեին ուղարկվում է վճարումը կատարելու վերաբերյալ հաստատում:

The screenshot shows a web browser window with the URL https://ipay.arca.am/payment/merchants/18532370/payment_hy.html?mdOrder=387ae9ce-6edf-4088-bd12-37791b04a708. The page title is "Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ" (State electronic payment system). A red warning box indicates "Session expires in 4:55". Below this, the text "Վճարում կատարելու համար լրացրեք հետևյալ դաշտերը" (Fill in the following fields to complete the payment) is displayed. The form contains the following fields: "Նկարագիր" (Description) with value "e-payments.am 404201"; "Գումար" (Amount) with value "100265.00 AMD"; "Քարտի համար" (Card number) - empty; "Քարտապանի անուն" (Cardholder name) - empty; "Քարտի վերջնաժամկետ" (Card expiration date) with dropdowns for "1 - Գունավոր" (Color) and "2017"; and "CVC2/CVV2 կոդ" (CVC2/CVV2 code) - empty. A "Վճարել" (Pay) button is at the bottom.



Հայտերի ընդունման ժամկետները

1) խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի համար՝ յուրաքանչյուր օրվա մինչև ժամը 15:00-ն ներկայացված հայտը համարվում է ընդունված նույն օրը, իսկ ժամը 15:00-ից հետո ներկայացված հայտը՝ հաջորդ աշխատանքային օրը.


2) կարճաժամկետ պարտատոմսերի համար՝ տեղաբաշխման աճուրդի կազմակերպման հայտարարության հրապարակման պահից մինչև վերջնահաշվարկի օրվա ժամը 15:00-ն, եթե պարտատոմսերի ձեռքբերման հայտը ներկայացվել է սպասարկման կետ, և տեղաբաշխման աճուրդի արդյունքների հրապարակման պահից մինչև վերջնահաշվարկի օրվա ժամը 15:00-ն, եթե ձեռքբերման հայտը ներկայացվել է առցանց սպասարկման կետի միջոցով.

3) միջնաժամկետ և երկարաժամկետ արժեկտրոնային պարտատոմսերի համար՝ տեղաբաշխման աճուրդի արդյունքների հրապարակման պահից մինչև վերջնահաշվարկի օրվա ժամը 15:00-ն:



Առցանց եղանակով պետական խնայողական արժեկտրոնային պարտատոմսերի հետզնում

Ներդրողները համակարգի միջոցով կարող են առցանց մասնակցել խնայողական պարտատոմսերի հետզնումներին՝ հրապարակված հետզնման ենթակա պարտատոմսերի ցանկից ընտրելով իրենց կողմից ձեռքբերված պարտատոմսը:





Առցանց եղանակով հաշվետվությունների ձևավորում

Համակարգը հնարավորություն է տալիս ձևավորել հաշվետվություններ կատարված գործառնությունների վերաբերյալ՝ տարեկան, եռամսյակային, ամսական և այլ պարբերականությամբ:

Պարտատոմսեր Լորություններ **Հաշվետվություններ** Օրենքներ և Կարգավորումներ Հաճախ տրվող հարցեր Անձնական տվյալներ Ելք

Տեղեկանք գործառնությունների մասին **Հաշվից քաղվածք** Չհաշվանցված գործարքներ

Քաղվածքի ստացում

<input checked="" type="radio"/> Տարեկան սկսած 2019 մինչև 2020	<input type="radio"/> Եռամսյակային սկսած 2019 III Եռամսյակ մինչև 2019 III Եռամսյակ	<input type="radio"/> Ամսական սկսած 09/2019 մինչև 09/2019	<input type="radio"/> Ժամանակահատված սկսած 06/09/2019 մինչև 06/09/2019
---	---	--	---

գեներացնել



Ձևավորված հաշվետվությունը պարունակում է մանրամասն տեղեկատվություն ընտրված ժամանակահատվածում կատարված գործառնությունների վերաբերյալ և ունի հետևյալ տեսքը.

Հաշվետվությունը պատկանում է հետևյալ ժամանակահատվածին 24/04/2017 - 06/09/2019

Տարբերակիչ ծածկագիր	Գործարքի տեսակ	Գործարքի ամսաթիվ	Վերջնահաշվարկի ամսաթիվ	Գործարքի զինը (զնման/վաճառքի գումարը)	Պարտատոմսի տարեկան եկամտաբերություն	Գումարի չափ	Մնացորդի չափ	Արժույթ	Նույնացուցիչ
---------------------	----------------	------------------	------------------------	---------------------------------------	-------------------------------------	-------------	--------------	---------	--------------



Կատարելք ապահով ներդրում և ստացելք կայուն եկամուտ